



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

## **ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2019 թվականի 2-րդ եռամսյակում 20/19 ծածկագրով «Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում» մրցույթի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ**

**ԵՐԵՎԱՆ 2019**

**«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները**

**Մոնիթորինգի իրականացման հիմքը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

**Մոնիթորինգի օբյեկտը՝** «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ (այսուհետ նաև Ընկերություն):

**Մոնիթորինգի առարկան՝** Ընկերության կողմից 2019 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

**Մոնիթորինգի նպատակը՝** Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

**Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝** 2019 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 15-ը:

**Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝** Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

## «Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում» բաց մրցույթ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2019 թվականի գնումների պլանի հիման վրա, հիմք ընդունելով Ընկերության կողմից հաստատված գնումների կարգի 7.4.2 կետը կազմակերպել և անցկացրել է «Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում» բաց մրցույթ:

Հայտարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2019 թվականի ապրիլի 3-ին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2019 թվականի ապրիլի 19-ը: Մատակարարման պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվում կնքման պահից 50 օր:

Նախքան մրցույթի հայտարարումը, ընկերությունը կատարել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:

Մրցույթի հայտարարումից հետո բաց առաջարկների հարցման հրավերին համապատասխան կարգով հայտ է ներկայացրել 2 մասնակից՝ «Այսոյուշնս» և «Լանս» ՍՊԸ-ները:

2019 թվականի ապրիլի 19-ին կայացած տեխնիկական առաջարկների գնահատման նիստի ընթացքում մասնակիցների ներկայացրած տեխնիկական առաջարկները մրցութային հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես հրավերի և գնումների ուղեցույցի պահանջներին համապատասխան և հնարավորություն է տրվել մասնակցել էլեկտրոնային եղանակով գնային առաջարկ ներկայացնելու փուլին: Ներկայացված գնային առաջարկները բերված են ստորև.

Ընկերության անվանումը	Ներկայացված գնային առաջարկները՝ մլն դրամ, առանց ԱԱՀ
1	2
«Լանս» ՍՊԸ	9,08
«Այսոյուշնս» ՍՊԸ	9,11

2019 թվականի ապրիլի 24-ին կայացած գնային առաջարկների գնահատման նիստի ընթացքում հաղթող է ճանաչվել «Լանս» ՍՊԸ-ն՝ հայտի գինը 9,08 մլն դրամ՝ առանց ԱԱՀ: Պայմանագիրը կնքվել է 2019 թվականի հունիսի 7-ին, մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման պահից 50 օր:

«Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում» բաց մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ.

1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն գնման ընթացակարգի փաստաթղթերը և գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:
2. Նախքան մրցույթի հայտարարումը, ընկերությունը կատարել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:
3. Հաղթող է ճանաչվել հրավերի պահանջները բավարարող, ամենացածր գին առաջարկած մասնակիցը:
4. Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված պայմանագրի կնքման պահից 50 օր:



**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՆՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ**

Ընկերության անվանում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

Գնման անվանումը «Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում»

Գնման ծածկագիրը 20/19

Գնման ձևը Բաց մրցույթ

**ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ**

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1 Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և մոնիթորինգ իրականացնելու համար բավարար տեղեկատվություն են պարունակում	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

**ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2 Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
3 Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
4 Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

Ստուգաթերթի պայման	Ա Ո Չ/Ո	Մեկնաբանություններ
5 Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակելուց բացի դիմել է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Հայտարարությունը հրապարակվել է նաև iTender և armtimes.com էլեկտրոնային կայքերում:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

Ստուգաթերթի պայման	Ա Ո Չ/Ո	Մեկնաբանություններ
6 Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	
7 Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	<input type="checkbox"/> <input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/>	
8 Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	
9 Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	
10 Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝	<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	

**ամբողջական նկարագրությունը**

- 11 Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը
- 12 Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ**

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
13 Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
14 Պայմանագրի կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
15 Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
16 Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ**

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
17	Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
18	Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
19	Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	